# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

14 դեկտեմբերի 2020թ. N 401-Ա

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԽՈՀԱՆՈՑՆ ՈՒ ՊԱՐԻՍՊԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 8-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-13-րդ կետերի և 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման, հաշվի առնելով, որ խոհանոցն ու պարիսպը կառուցված չեն ու չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ, պատկացված 0.07 հեկտար մակերեսով հողամասից փաստացի ավել օգտագործվող 0.00309 հեկտար մակերեսով հողամասը համայնքի հողերի օգտագործման սխեմայով նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, նշված հողամասի օգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը և հիմք ընդունելով սեփականության վկայագիրը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը, լիազորագիրը, Ամալյա Համլետի Ղարսոյանի ու Վարդան Արամայիսի Ղարսոյանի համատեղ դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Ճանաչել Ամալյա Համլետի Ղարսոյանի, Համլետ Արամայիսի Ղարսոյանի ու Վարդան Արամայիսի Ղարսոյանի սեփականության իրավունքը իրենց սեփականության իրավունքով պատկանող 0.07 հեկտար մակերեսով հողամասից (ծածկագիր՝ 07-003-0032-0011) փաստացի ավել օգտագործվող 0.00309 հեկտար մակերեսով հողամասի նկատմամբ:

2.Ամալյա Համլետի Ղարսոյանին, Համլետ Արամայիսի Ղարսոյանին և Վարդան Արամայիսի Ղարսոյանին պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Սամվել Վարդանյան փողոց 37 հասցեի 0.07309 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված բնակելի նպատակային նշանակության ընդհանուր 27.36 քմ արտաքին (23.29 քմ ներքին) մակերեսով խոհանոցն ու պարիսպը ճանաչել օրինական:

3.Ամալյա Համլետի Ղարսոյանին, Համլետ Արամայիսի Ղարսոյանին և Վարդան Արամայիսի Ղարսոյանին՝ համայնքապետարանի 900105202213 հաշվեհամարին վճարել 57456 (հիսունյոթ հազար չորս հարյուր հիսունվեց) դրամ՝ ընդհանուր 27.36 քմ արտաքին մակերեսով խոհանոցի և պարսպի օրինականացման վճար:

4.Սույն որոշման 2-րդ կետում նշված ընդհանուր 0.07309 հեկտար մակերեսով հողամասը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, ինչպես նաև չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք:

5.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում Բյուրեղավանի համայնքապետարանի համապատասխան հաշվեհամարին չվճարելու դեպքում որոշումն համարվում է ուժը կորցրած:

6.Հաստատել որոշման անբաժանելի մասը կազմող «Աշոտ Հակոբյան Գուրգենի» անհատ ձեռնարկատիրոջ տված հողամասի ու շինությունների հատակագիծը:

7.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Восстановимая подпись

Подписано: YEGHIAZARYAN MISHA 1305540141

2020թ. դեկտեմբերի 14

ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 դեկտեմբերի 2020թ. N 402-Ա

### ՄԻԱՎՈՐՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱԳԾԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-13-րդ կետերի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի ու 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման, հաշվի առնելով, որ այգետնակը, տնտեսական շինությունը, ծածկը, սանհանգույցը, ջրավազանն ու պարիսպը կառուցված չեն ու չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ և հիմք ընդունելով թիվ 2276103 ու 1505859 սեփականության վկայականները, շինարարական կոնստրուկցիաների տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, Գարեգին Ֆելիքսի Ղազարյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Կոտայքի մարզ Նուռնուս այգեգործական զանգված թիվ 79 (ծածկագիր՝ 07-051-0158-0042) և Կոտայքի մարզ գյուղ Նուռնուս (ծածկագիր՝ 07-051-0158-0095) հասցեներում գտնվող անշարժ գույքերին տրամադրել միավորված հասցե.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Շինարար թաղամաս 3-րդ փողոց 79:

2. Գարեգին Ֆելիքսի Ղազարյանին (ծնված՝ 1968 թվականի ապրիլի 30-ին) սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Շինարար թաղամաս 3-րդ փողոց 79 հասցեի 0.0917 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ

կառուցված բնակելի նպատակային նշանակության ընդհանուր 277.11 քմ արտաքին (225.1 քմ ներքին) մակերեսով այգետնակը, տնտեսական շինությունը, ծածկը, սահմանգույցը, ջրավազանն ու պարիսպը ճանաչել օրինական:

3.Գարեգին Ֆելիքսի Ղազարյանին՝ համայնքապետարանի 900105202213 հաշվեհամարին վճարել 238359 (երկու հարյուր երեսունութ հազար երեք հարյուր հիսունինը) դրամ՝ 216.69 քմ արտաքին մակերեսով այգետնակի օրինականացման վճար, 39877.2 (երեսունինը հազար ութ հարյուր յոթանասունյոթ ամբողջ երկու տասնորդական) դրամ՝ ընդհանուր 60.42 քմ արտաքին մակերեսով տնտեսական շինության, ծածկի, սահմանգույցի, ջրավազանի ու պարսպի օրինականացման վճար, ընդամենը՝ 278236.2 (երկու հարյուր յոթանասունութ հազար երկու հարյուր երեսունվեց ամբողջ երկու տասնորդական) դրամ:

4.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում Բյուրեղավանի համայնքապետարանի համապատասխան հաշվեհամարին չվճարելու դեպքում որոշումն համարվում է ուժը կորցրած:

5.Հաստատել որոշման անբաժանելի մասը կազմող «ԳԵՈԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տված վերոնշյալ հողամասի ու շինությունների հատակագիծը:

6.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Восстановимая подпись

X

Подписано: YEGHIAZARYAN MISHA 1305540141

2020թ. դեկտեմբերի 14
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 դեկտեմբերի 2020թ. N 403-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՅԳԵՏՆԱԿՆ ՈՒ ՊԱՐԻՍՊԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-13-րդ և 22.1-րդ կետերի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի, հաշվի առնելով, որ այգետնակն ու պարիսպը կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, կառուցված չեն ու չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ և հիմք ընդունելով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2020 թվականի սեպտեմբերի 09-ին տված Աբ-1642 արխիվային տեղեկանքը, ժառանգության իրավունքի վկայագրերը, շինարարական կոնստրուկցիաների տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունն ու Վարդան Արամայիսի Ղարսոյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Աբովյանի շրջանի Նուռնուսի այգետարածքի 12-րդ զանգվածի թիվ 22 հասցեում գտնվող անշարժ գույքը վերահասցեավորել.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Ռիգ թաղամաս 12-րդ փողոց 22:

2.Վարդան Արամայիսի Ղարսոյանին (ծնված՝ 1963 թվականի մարտի 01-ին) սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Ռիգ թաղամաս 12-րդ փողոց 22 (ծածկագիր՝ 07-051-0145-0013) հասցեի 0.0500 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասում

ինքնակամ կառուցված բնակելի նպատակային նշանակության ընդհանուր 228.55 քմ արտաքին (195.49 քմ ներքին) մակերեսով այգետնակն ու պարիսպը ճանաչել օրինական:

3.Հաստատել որոշման անբաժանելի մասը կազմող «Աշոտ Հակոբյան Գուրգենի» անհատ ձեռնարկատիրոջ տված վերոնշյալ հողամասի ու շինությունների հատակագիծը:

4.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Восстановимая подпись

X

Подписано: YEGHIAZARYAN MISHA 1305540141

2020թ. դեկտեմբերի 14

ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 դեկտեմբերի 2020թ. N 404-Ա

### ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՔԱՂԱՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ 26 ՇԵՆՔ ԹԻՎ 38 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի, հիմք ընդունելով բնակարանի առուվաճառքի պայմանագիրն ու Նարինե Սուրենի Ստեփանյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Կոտայքի մարզ քաղաք Բյուրեղավան 26 շենք թիվ 38 բնակարանի (վկայական 2092792, տրված 2006 թվականի հունվարի 09-ին) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վազգեն Սարգսյան փողոց 26 շենք 38 բնակարան:

2.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Восстановимая подпись

X

Подписано: YEGHIAZARYAN MISHA 1305540141

2020թ. դեկտեմբերի 14

ք. Բյուրեղավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 դեկտեմբերի 2020թ. N 405-Ա

## 2021 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Համայնքային ծառայության մասին» օրենքի 19-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն համակարգող նախարարի 2006 թվականի սեպտեմբերի 11-ի N 15-Ն հրամանով հաստատված կարգի 12-րդ կետի՝ ***որոշում եմ.***

1.Հաստատել 2021 թվականին հերթական ատեստավորման ենթակա Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների ցուցակը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Восстановимая подпись

X

Подписано: YEGHIAZARYAN MISHA 1305540141

2020թ. դեկտեմբերի 14
ք. Բյուրեղավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 դեկտեմբերի 2020թ. N 406-Ա

## ԼԻԱՆԱ ՂՈՒԿԱՍՅԱՆ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Լիանա Ղուկասյանի հայտը և վճարման անդորրագրերը՝ ***որոշում եմ***

1.Լիանա Ղուկասյան անհատ ձեռնարկատիրոջը (հարկ վճարողի հաշվառման համար՝ 82664882) տալ ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն Բյուրեղավան համայնքի քաղաք Բյուրեղավան Երիտասարդական փողոց 23 շենքին հարակից հասցեում գտնվող 24 քմ մակերեսով տարածքով առևտրի օբյեկտում՝ 2020 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ի համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Восстановимая подпись

X

Подписано: YEGHIAZARYAN MISHA 1305540141

2020թ. դեկտեմբերի 15
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 դեկտեմբերի 2020թ. N 407-Ա

## ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԵՎ ՈՐՊԵՍ ԳՐԱՎԱՏՈՒՆԵՐ ՀԱՆԴԵՍ ԳԱԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասի, Քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, Բյուրեղավան համայնքի ղեկավարի 2018 թվականի հունվարի 31-ի N 34-Ա որոշմամբ հաստատված Բյուրեղավան համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի աշխատակարգի և հիմք ընդունելով Կարեն Եգորի Սարգսյանի դիմումն ու Բյուրեղավան համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 11-ի եզրակացությունը՝ ***որոշում եմ.***

1.Թույլատրել Կարեն Եգորի Սարգսյանին (ծնված՝ 1988 թվականի օգոստոսի 4-ին, հաշվառված՝ Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Սամվել Վարդանյան փողոց 6 շենք 27 բնակարան, անձնագիր՝ AR0388408, տրված՝ 2017 թվականի հուլիսի 21-ին 059-ի կողմից) գրավ դնել ձեռք բերվող Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 30 շենք 5 բնակարանի՝ իր անչափահաս երեխաներ Գոռ Կարենի Սարգսյանին (ծննդյան վկայական՝ ԱԲ N 431409, տրված՝ 2015 թվականի նոյեմբերի 20-ին, ծնված՝ 2015 թվականի նոյեմբերի 19-ին) և Կամիլլա Կարենի Սարգսյանին (ծննդյան վկայական՝ ԲԱ129323, տրված՝ 2019 թվականի հունիսի 18-ին, ծնված՝ 2019 թվականի հունիսի 16-ին) պատկանող բաժնեմասերը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարեն Եգորի Սարգիսյանին որոշման ընդունման մասին իրազեկվելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Восстановимая подпись

X

Подписано: YEGHIAZARYAN MISHA 1305540141

2020թ. դեկտեմբերի 15
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 դեկտեմբերի 2020թ. N 408-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Քաղաքաշինության մասին» օրենքի $14^{1}$-րդ և 30-րդ հոդվածների, Հողային օրենսգրքի 57-րդ հոդվածի 1.1-րդ մասի և 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի, 2006 թվականի մայիսի 18-ի № 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ և 34.2-րդ կետերի, 35-րդ կետի «դ» և «ե» ենթակետերի և հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 11-ի N 56-Ա որոշումը, Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 7 շենք 32 բնակարանի բնակիչ Մհեր Արամայիսի Բաբայանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող (վկայական N 29102020-07-0095, գաղտնաբառ՝ IAFGJCVDI1RV) Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Սամվել Վարդանյան փողոց թիվ 24/58 հասցեում գտնվող 32.1 քմ ներքին (35.5 քմ արտաքին) մակերեսով բնակելի նպատակային նշանակության (գործառնական նշանակությունը՝ ավտոտնակ) ավտոտնակը 74550 (յոթանասունչորս հազար հինգ հարյուր հիսուն) դրամով և դրա զբաղեցրած 0.00355 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության (ծածկագիր՝ 07-003-0030-0032-001) հողամասը 104370 (մեկ հարյուր չորս հազար երեք հարյուր յոթանասուն) դրամով ուղղակի վաճառքի ձևով օտարել կառույցն իրականացրած Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 7 շենք 32 բնակարանի բնակիչ Մհեր Արամայիսի Բաբայանին:

2.Նշված գույքը դուրս գրել Բյուրեղավան համայնքի հաշվեկշռից:

3.Սահմանել, որ նշված գույքի առուվաճառքի պայմանագրի վավերացման և գրանցման հետ կապված վճարները կատարվում է Մհեր Արամայիսի Բաբայանի կողմից:

4.Համաձայնարարել Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Դանիել Դանիելյանին (նույնականացման քարտ՝ 008117145, տրված՝ 2016 թվականի օգոստոսի 24-ին 059-ի կողմից, ծնված՝ 1987 թվականի հունվարի 07-ին)՝ կատարել Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Սամվել Վարդանյան փողոց թիվ 24/58 հասցեում գտնվող 32.1 քմ ներքին մակերեսով ավտոտնակը և դրա զբաղեցրած 0.00355 հեկտար մակերեսով հողամասը ուղղակի վաճառքի ձևով Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 7 շենք 32 բնակարանի բնակիչ Մհեր Արամայիսի Բաբայանին օտարելու հետ կապված գործարքներ և կնքել առուվաճառքի պայմանագիր:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Восстановимая подпись

X

Подписано: YEGHIAZARYAN MISHA 1305540141

2020թ. դեկտեմբերի 15
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 դեկտեմբերի 2020թ. N 409-Ա

### ԱՐՄԵՆ ՄԱԿՅԱՆ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Արմեն Մակյանի հայտը և վճարման անդորրագրերը՝ ***որոշում եմ.***

1.Արմեն Մակյան անհատ ձեռնարկատիրոջը (հարկ վճարողի հաշվառման համար՝ 43088161) տալ ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն Բյուրեղավան համայնքի քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 32/73 հասցեում գտնվող 95 քմ մակերեսով տարածքով առևտրի օբյեկտում՝ 2020 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ի համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Восстановимая подпись

X

Подписано: YEGHIAZARYAN MISHA 1305540141

2020թ. դեկտեմբերի 16
ք. Բյուրեղավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 դեկտեմբերի 2020թ. N 410-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՀԱՄԱՅՆՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ 1 ՇԵՆՔ 33 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի ու հիմք ընդունելով Նինա Հրաչիկի Ենգիբարյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Նինա Հրաչիկի Ենգիբարյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան 1 շենք 33 բնակարանի (վկայական 17032014-07-0026, տրված 2014 թվականի մարտի 17-ին) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Կոտայքի փողոց 1 շենք 33 բնակարան:

2.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Восстановленная подпись

Подписано: YEGHIAZARYAN MISHA 1305540141

2020թ. դեկտեմբերի 17
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 դեկտեմբերի 2020թ. N 411-Ա

### ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՔԱՂԱՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ 34-ՐԴ ՇԵՆՔԻ ԹԻՎ 53 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի, հիմք ընդունելով բնակարանի առուվաճառքի պայմանագիրն ու Լիպարիտ Պավլեի Առուստամյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Լիպարիտ Պավլեի Առուստամյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ քաղաք Բյուրեղավան 34-րդ շենքի թիվ 53 բնակարանի (վկայական 2318162, տրված 2007 թվականի մարտի 15-ին) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վազգեն Սարգսյան փողոց 34 շենք 53 բնակարան:

2.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

...подпись

X

...YEGHIAZARYAN MISHA 1305540141

2020թ. դեկտեմբերի 17
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 դեկտեմբերի 2020թ. N 412-Ա

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՔԱՂԱՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ 31 ՇԵՆՔԻ ԹԻՎ 32 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի ու հիմք ընդունելով Միլվա Սամսոնի Ղույանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Միլվա Սամսոնի Ղույանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ քաղաք Բյուրեղավան 31 շենքի թիվ 52 բնակարանի (վկայական 1507164, տրված 2005 թվականի սեպտեմբերի 12-ին) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 31 շենք 52 բնակարան:

2.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Электронная подпись

Подписано: YEGHIAZARYAN MISHA 1305540141

2020թ. դեկտեմբերի 18
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2020թ. N 413-Ա

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՀԱՄԱՅՆՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ 30 ՇԵՆՔ 5 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի ու հիմք ընդունելով Կարեն Եգորի Սարգսյանի դիմումը՝ *որոշում եմ*.

1.Կարեն Եգորի Սարգսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան 30 շենք 5 բնակարանի (վկայական N 06102020-07-0094, տրված 2020 թվականի հոկտեմբերի 06-ին) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 30 շենք 5 բնակարան:

2.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Верифицируемая подпись

X

Подписано: YEGHIAZARYAN MISHA 1305540141

2020թ. դեկտեմբերի 18
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

18 դեկտեմբերի 2020թ. N 414-Ա

## ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺՆԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՌԻՍԿԻ ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ԵՎ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 101-րդ կետի և հիմք ընդունելով Բյուրեղավանի համայնքապետարանի ներքին աուդիտի կանոնակարգի 29-րդ կետը, Բյուրեղավանի համայնքապետարանի ներքին աուդիտի կոմիտեի 2020 թվականի դեկտեմբերի 18-ի N ՆԱԿ-10/20 նիստի որոշումը՝ ***որոշում եմ.***

1.Հաստատել Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի 2021 թվականի ռիսկի չորս ընտրանքային չափորոշիչները՝ հետևյալ կազմով.

1) նշանակալիություն,

2) ֆինանսական ազդեցություն,

3) ստացված ֆինանսավորման չափ,

4) հայտնաբերված թերացումներ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Восстановимая подпись

Подписано: YEGHIAZARYAN MISHA 1305540141

2020թ. դեկտեմբերի 18
ք. Բյուրեղավան

**Հավելված**
Բյուրեղավան համայնքի ղեկավարի
2020 թվականի դեկտեմբերի 14-ի N 405-Ա որոշման

**ՑՈՒՑԱԿ**
2021 թվականին հերթական ատեստավորման ենթակա
Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային
ծառայողների

| Հ/հ | Անուն, ազգանուն, հայրանուն | Պաշտոնը | Պաշտոնի ծածկագիր | Պաշտոնների խումբը | Ատեստավորման անցկացման ամիսը |
|---|---|---|---|---|---|
| 1. | Լիլիթ Ավուշյան Մկրտչի | Աշխատակազմի քարտուղար | 1.2-1 | Գլխավոր պաշտոնների խմբի 2-րդ ենթախումբ | Հունիս |
| 2. | Լիդիա Պողոսյան Աշոտի | Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ | 2.1-1 | Առաջատար պաշտոնների խմբի 1-ին ենթախումբ | Հունիս |
| 3. | Նինա Մարկոսյան Արամի | Ներքին աուդիտի բաժնի պետ | 2.1-2 | Առաջատար պաշտոնների խմբի 1-ին ենթախումբ | Հունիս |